

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱ-ՀԱՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25,38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հուլիսի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Ճգնաժամի հաղթահարման աջակցության ծրագիր (հատուկ գործողություններ)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 22.07.2009թ. դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ճգնաժամի հաղթահարման աջակցության ծրագիր (հատուկ գործողություններ)» վարկային համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2009 թվականի հուլիսի 15-ին՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը մեղմացնելու համար Հայաստանի Հանրապետությանն աջակցելու նպատակով:

2. Վարկային համաձայնագիրը բաղկացած է վեց հոդվածներից և հինգ հավելվածներից:

Համաձայնագիրը ներառում է հոդվածներ վարկի, վարկի տրամադրման կարգի, սահմանումների, վարկային միջոցների օգտագործման, հատուկ պայմանավորվածությունների, համաձայնագրի գործողության ժամկետի, ինչպես նաև դրա իրականացման այլ դրույթների վերաբերյալ:

Հավելվածները ներառում են Ճգնաժամի հաղթահարման աջակցության ծրագրի նկարագրությունը, վճարների ժամանակացույցը, վարկային միջոցների մասհանումների պայմանները և այլն:

3. Վարկային համաձայնագրով նախատեսվում է ԱԶԲ-ի Հատուկ ֆոնդի ռեսուրսներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել վարկ՝ երկու մասով, համապատասխանաբար՝ 29,735,000 և 21,643,000 Հատուկ փոխառության իրավունքներին (ՀՓԻ) համարժեք գումար՝ տարբեր արտարժույթներով, ընդհանուր գումարով՝ 51, 378,000 ՀՓԻ, որը համարժեք է 80,000,000 ԱՄՆ դոլարին:

Վարկային համաձայնագրի տևողությունն է 24 տարի, որից 8 տարին արտոնյալ ժամանակահատված է:

Վարկի առաջին մասով նախատեսված է տարեկան 1% տոկոսադրույքով վարկային վճար արտոնյալ ժամանակաշրջանի ընթացքում և տարեկան 1.5%՝ մարման ժամանակահատվածում: Վարկի երկրորդ մասով նախատեսված է տարեկան 1.6% տոկոսադրույք՝ վարկի մարման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

Վճարման արժույթը ԱՄՆ դոլարն է:

Որպես վարկի տրամադրման վերջնաժամկետ նախատեսված է 2009 թվականի դեկտեմբերի 31-ը կամ Վարկառուի և ԱԶԲ-ի միջև փոխհամաձայնեցված այլ օր:

4. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- համամասնորեն մարել վարկային հաշվից ստացված վարկի մայր գումարը՝ համաձայնագրի հավելված 2-ում նշված ամորտիզացիոն վճարների ժամանակացույցի համաձայն,
- ապահովել, որ վարկային միջոցներն ուղղվեն ծրագրային ծախսերի ֆինանսավորմանը՝ վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան,
- Ծրագրի իրականացման ընթացքում կատարել կամ ապահովել վարկային համաձայնագրի հավելված 5-ում շարադրված բոլոր պարտավորությունների կատարումը,
- տրամադրել, կամ ապահովել տրամադրումը, ԱԶԲ-ին եռամսյակային հաշվետվություններ՝ Ծրագրի առաջընթացի և Քաղաքականության նամակով նախանշված գործողությունների ընթացքի վերաբերյալ,
- լիարժեք համագործակցել ԱԶԲ-ի հետ՝ կատարողականի գնահատման և հսկման համակարգ մշակելու գործում, ինչպես նաև ԱԶԲ-ի հետ մշակել և օգտագործել հատուկ չափորոշիչներ՝ գնահատելու Ծրագրի արդյունքները և ազդեցությունները:

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին և բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հուլիսի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Ճգնաժամի հաղթահարման աջակցության ծրագիր (հատուկ գործողություններ)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ